

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԸ «ԲԱԶՄԱՎԷՊԻ» ԷԶԵՐՈՒՄ (1843-1920)

Հայ-ուսական գրական առնչութիւնների ձեւաւորման ու զարգացման գործում իր ուրոյն տեղն ու դերն ունի Վենետիկի Միլիթարեան միաբանութեան հրատարակած «Բազմավէպ» ամսագիրը։ Այն անխզելիօրէն կապուած է եղել հայ ժողովրդի կեանքի ու նրա դժուարին ճակատագրի հետ՝ հետեւողականօրէն արձագանքելով հասարակական, քաղաքական, գրական ու մշակութային այն բոլոր հրատապ ու կարեւոր խնդիրներին, որոնք բարձրացուել են հանրութեան կողմից։

Ընթերցողների հոգեւոր, գեղագիտական ու գրական ճաշակի դաստիարակութիւնը մշտապէս եղել է խմբագրութեան աշխատակիցների տեսադաշտում։ Թերթելով «Բազմավէպի» էջերը, մէկ անգամ եւս համոզոււմ ես, որ շատ նիւթեր այսօր էլ չեն կորցրել իրենց թարմութիւնն ու արդիականութիւնը։

Ամսագրի խմբագիրներն առանձնայատուկ ուշադրութիւն են դարձրել ինչպէս հայ, այնպէս էլ համաշխարհային գրականութեան եւ գրական առնչութիւնների ներկայացմանն ու տարածմանը։ 1844 թուականից սկսած, երբ ամսագրում առաջին անգամ տպագրուեց Ի. Կռիլովի «Կուարտետ» («Երաժիշտք») առակը¹, «Բազմավէպում» պարբերաբար ներկայացւում էին նաեւ ռուս դասական գրականութեանը վերաբերող նիւթեր. գրականութիւն, որն իր մարդասիրական գաղափարներով, համամարդ-

¹ Ի. Կռիլովի առակների թարգմանութիւնների յաճախ կարելի է հանդիպել «Բազմավէպի» տարբեր տարիների համարներում. «Բազմավէպ», 1844, N 19, բ տարի, էջ 288 «Կաղնին եւ Շղէգն», «Կատուն եւ սոխակը», 1866, N 11, էջ 347։

կային խնդիրների ընդգրկմամբ, հաւատքի, անհատի հոգեւոր յարուժեան, երկրի վրայ նրա ունեցած դերի ու կոչման հարցադրումներով որոշակի հետաքրքրութիւն էր ներկայացնում Մխիթարեանների համար: Բարոյական ու հոգեւոր արժէքների, արդարութեան եւ մարդկային ճիշտ փոխարարելութիւնների որոնումները, որոնք բարձրացում էին ռուս դասականների ստեղծագործութիւններում, շատ առումներով նաեւ համահունչ էին ամսագրի կրօնաբարոյագիտական, փիլիսոփայական ու գաղափարական ուղղութեանը: Ի. Կռիլով, Ի. Դմիտրեւ, Գ. Դերժաւին, Ա. Պուշկին, Մ. Լեւմոնտով, Ն. Գոգոլ, Ի. Տուրգենեւ, Լ. Տոլստոյ, Ն. Նեկրասով, Ա. Չեխով, Մ. Գորկի, Լ. Անդրէեւ, Ա. Տոլստոյ եւ ուրիշներ. ահա ռուս գրողների ոչ լրիւ ցանկը, որոնց մասին կենսագրականներ, ակնարկներ, գրական-քննադատական յօդուածներ, գրախօսութիւններ եւ հաղորդումներ են տպագրուել «Բազմավէպում»: Առանձին դէպքերում դրանք ուղեկցուել են նաեւ ոչ մեծ ծաւալի ստեղծագործութիւնների թարգմանութիւններով, ռուսական պատմութեանը, կեանքին ու մշակոյթին վերաբերող յօդուածներով:

Գաղտնիք չէ, որ ցանկացած ժողովրդի գրականութեան ճանաչման ու զնահատման կարեւորագոյն միջոցը թարգմանութիւնն է, որը հնարաւորութիւն է տալիս ընթերցողին ոչ միայն մայրենի լեզուով ծանօթանալու այս կամ այն հեղինակի ստեղծագործութեանը, այլեւ ճանապարհ է հարթում հէնց այդ հեղինակի ստեղծագործական աշխարհը, գրելաոճը, գեղագիտական սկզբունքները հասկանալու համար: Այս առումով հայ մտաւորականութիւնը հսկայական դեր էր յատկացնում թարգմանական գրականութեանը եւ թարգմանական գործին՝ համարելով, որ այն ազգային մշակոյթը հարստացնելու մեծ հնարաւորութիւն է տալիս: Ի դէպ հայ-ռուսական մշակութային կապերը խորը եւ ինքնատիպ դրսեւորումներ ունեն: Մտաւորականութիւնն արձագանքում էր գրական ամէն մի նոր երեւոյթի, շատ յաճախ միեւնոյն ստեղծագործութիւնը թարգմանում, տպագրում էր զուգահեռաբար եւ արեւելահայերէն, եւ արեւմտահայերէն: Արեւմտահայերէն տպագրուող պարբերականների ուսումնասիրութիւնը, յատկապէս մինչեւ 1914 թուականը, թոյլ է տալիս ասելու, որ արեւմտահայ ընթերցողը եւս, չնայած մի շարք դժուարութիւնների՝ քաղաքական, աշխարհագրական, լեզուական, հրատարակչա-

կան եւ այլն, ծանօթ էր ռուս դասականների կեանքին եւ ստեղծագործութիւններին:

«Բազմավէպ» ամսագիրն այս առումով այն լուրջ, հեղինակաւոր ամսագրերից էր, որը կարգում էին եւ՛ արեւելահայութեան, եւ՛ արեւմտահայութեան շրջանում: Միաժամանակ հարկ է նշել, որ ամսագիրն արձագանքում էր արեւելահայ մամուլում տպագրուող այն բոլոր գրական-մշակութային բնոյթի յօդուածներին եւ թարգմանութիւններին, որոնք արժէքաւոր էր համարում:

Այսպէս «Ակնարկներ» բաժնում զետեղուած Պօղոս Զաւարեանի յօդուածում բարձրացրած հարցերն, անշուշտ, էական ու կարեւոր էին համարում նաեւ ամսագրի խմբագիրները. «Ռուս գրականութեան մէջ, մանաւանդ վաթսուցական թուականներին, եւ թէ նրանից յետոյ»- գրում է նա,- արծարծուել են այնպիսի մտքեր, յարուցուել են այնպիսի խնդիրներ, որոնց հետ ծանօթանալը եւ որոնց հասկանալը կենսական կարիք է մեր ռուսահայերիս համար: Մօտաւորապէս կէս դար կը լինի, որ մեր լեզուով սկսել են թարգմանուել ռուս գրականութեան զանազան ստեղծագործութիւններ, սակայն չնայած այդքան երկար ժամանակամիջոցին, այսօր դեռեւս շատ քիչ բան է արուած այդ ասպարէզում»²:

Այնուհետեւ հեղինակը նշում է, որ դա իր պատճառներն ունի, որոնցից հիմնականն այն է, որ գրականութեան մէջ թարգմանական ճիւղը երրորդական նշանակութիւն է ունեցել: Հեղինակը միաժամանակ իրաւացիօրէն նշում է, որ ցանկացած գրականութեան զարգացման համար չափազանց կարեւոր է դրսից ներմուծուող թարմ, կազդուրիչ հոսանքը:

Հարկ է նշել, որ ռուս դասականների մասին նիւթերը հիմնականում ներկայացւում էին երեք սկզբունքով. տեղեկատուական բնոյթի ոչ մեծ ծաւալի յօդուածներ, որոնք ուղեկցւում էին տուեալ բանաստեղծի որոշ ստեղծագործութիւնների թարգմանութեամբ, կենսագրական յօդուածներ, որոնցում համառօտ ներկայացւում էր գրողի կեանքը եւ ստեղծագործութիւնը, ինչպէս նաեւ համեմատական-զուգահեռական բնոյթի գրականագիտական

² ՊՕՂՈՍ ԶԱՒԱՐԵԱՆ, «Բազմավէպ», 1904, Յուլիս, Թ. Ը., էջ 448-449:

յօդուածներ, որոնցում զուգահեռ էր անցկացւում ռուս կամ ռուս եւ եւրոպական դրողների ու նրանց ստեղծագործութիւնների միջեւ: «Բազմալէպում» առանձին տեղ է յատկացուել նաեւ վերլուծական-քննադատական բնոյթի յօդուածներին. դրանցում փորձ է արւում մանրամասնօրէն ներկայացնել այս կամ այն հեղինակի ստեղծագործութիւնները՝ առաջնորդուելով համաշխարհային գրականութեան զարգացման չափանիշներով եւ օրինաչափութիւններով:

Ուշագրաւ է այն հանգամանքը, որ ամսագրում ներկայացուել են այնպիսի հեղինակներ, որոնց ստեղծագործութիւնները կապուած են ռուսական պատմութեան, պատմական խոշոր իրադարձութիւնների հետ: Օրինակ՝ 1846 թուականին «Բազմալէպի» «Բանասիրական տեղեկութիւն» բաժնում տպագրուած ոչ մեծ կենսագրականում ներկայացւում է ԺԼ. դարի ռուս յայտնի դրող Ի. Դիմիտրիւնը: Կենսագրական որոշ տեղեկութիւններից յետոյ, բարձր գնահատելով գրողին, որը «հաւասար քաջութեամբ է շարժում գէմն ու գրիչը», համեմատելով նրան մեր Գրիգոր Մազիստրոսի հետ, հեղինակը կանգ է առնում նրա «Երմակ» կոչուող, ինչպէս հեղինակն է ասում, «դիւցազնական տաղի վերայ»: «Երմակ անունով քաջ մարդը,՝ գրում է նա,՝ Դոմսֆի ըսուած խազախներուն աքամանը՝ այսինքն զօրապետն էր, Սիպիր կամ Սիպիրիա կոչուող ընդարձակ երկիրը տիրեց ու ետքը ռուսաց Իւան Դ. թագաւորին ընծայեց»: Հեղինակը միաժամանակ խօսում է կից ներկայացուող պոեմի թարգմանութեան մասին, ընդգծելով, որ «Երմակ» կոչուող դիւցազնական տաղը, որ հոս հայերէն կը թարգմանենք հաւատարմութեամբ, ու յանգի կատարելութիւնը թարգմանութեան նշտութեանը կը գոհաբերենք»³:

Թարգմանութիւնն ի դէպ գրաբար է, ցաւօք նշուած է թարգմանչի անունը.

Զոր ինձ տեսիլ բացեր հանդէպ
Ո՛ր հինաւուրց ժամանակ,
Ընդ օթոցաւ ժանտ գիշերոյ
Մինչ յամպս անգոյն կայ լուսին,

³ Տմբորիւս ռուս քանաստեղծ, «Բազմալէպ», Դ տարի, 1846, N 23, էջ 359-362:

Դիտեմ զԻրթիւ. գոչէ, շանթէ,
 Եւ 'ի գըրգանս պըտուտկեալ
 Փըրփուր ժայթքէ ըզմըկանամբ
 Կոծէ զափուսն ապառաժ:

Տեղեկատուական ընդթի է նաեւ Գ. Դերժաւինին նուիրուած յօդուածը, որին կից տպագրուած է նրա յայտնի «Աստուած» բանաստեղծութեան թարգմանութիւնը: Յօդուածի եւ թարգմանութեան հեղինակն է Առաքել Նալբանդեանը⁴: «Գաւրիլ Բովանովիչ Դերժաւինը,- գրում է նա,- ռուսաց բանաստեղծութեան տանգրին գլխաւոր սիւներէն մինը կը համարուի եւ այս քարգմանուած մուագս նրա քերթուածներէն մէջէն ծագեց իբրեւ լուսասփիւռ արշալոյս տաղանդաւոր մուսկերգչին ապառնի փառացը»: Թարգմանիչը ոչ միայն իր յօդուածում անդրադառնում է թարգմանութեան սկզբունքներին եւ բովանդակութեան իմաստը գիւրուութեամբ ընթերցողին հասցնելու նպատակին, այլեւ փորձում է մեկնաբանել, վերլուծել այն հիմնական գաղափարական, փիլիսոփայական, ինչպէս նաեւ գեղարուեստական արժանիքները, որ ունի Դերժաւինի այս բանաստեղծութիւնը. «Այս մուագին՝ գրեթէ համաշխարհական ժողովրդականութիւն ստանալուն պատճառը,- գրում է նա,- այն էր, որ իւր դասական վսեմութենէն, աստուածաբանական եւ փիլիսոփայական խորին եւ անմատչելի իմաստներէն զատ, կը շնչէր մա մի վիթխարի ուժով եւ այնպիսի մի բանաստեղծական խանդիւ, որոյ տպաւորութեան ներքեւ կենդանի գոյներով կը նկարուէին վեհատեսիլ պատկերներ եւ կը գրաւէին մարդոյ մտաւորական հայեացքը եւ ընդ սմին մտրա լարերուն կորովի բարախման խորէն կը լսուէր քնարերգակ ներդաշնակութեան մրմունջը, որուն հետքերը յետոյ յայտնապէս դուրս եկան Պուշկինի մի քանի մախնական ստեղծագործութիւններու մէջ»: Նշելով, որ բանաստեղծութեան տպագրութիւնից յետոյ այն թարգմանուել է եւրոպական մի շարք լեզուներով՝ գերմաներէն, ֆրանսերէն, անգլերէն, իսպաներէն, լեհերէն, չեխերէն, լատիներէն եւ անգամ ճապոներէն, թարգմանիչը գրում է. «Ասացեալ անուանի

⁴ Մանրամասն տե՛ս ՆԱԼԲԱՆԴԵԱՆ ԱՌԱՔԵԼ, Գաւրիլ Բովանովիչ Դերժաւինը եւ մտրա հռչակաւոր մուագը «Աստուած», «Բազմավէպ», 1903, մաս 1-ի, թիւ 6, էջ 225-227:

նուագը մեմֆ հարկ համարեցանք թարգմանել գրաքար լեզուով, նորա աստուածաբանական եւ փիլիսոփայական խորին իմաստները առաւել դիւրութեամբ քացատրելու նպատակով եւ ըստ կարեաց աշխատեցանք զայն հայկարանել. յուսով եմք, որ հայագէտ ընթերցողք մեր թերութեանց ներողամիտ կը լինեն»:

Վեհ ու հանդիսաւոր է թարգմանուած բանաստեղծութիւնը, որին առանձին հնչեղութիւն եւ խորութիւն է հաղորդում գրաբարը.

Ու ի հոգիսն անպարագիր շարժումն անեղ կենդանի,
Ժընուկնդ եւ ծիր ժամանակաց, անծագ՝ անմուտ արփենի,
Երեքարբեան տիպ գերաբուն յերիս անձինս միախոհ,
Ինքդ յինքենէ բխումն անճառ, Աստուածութիւն ինքնագոյ:

«Բազմավէպում» առանձնայատուկ տեղ է յատկացուել Ա. Պուլշկինի եւ Մ. Լերմոնտովի ստեղծագործութիւններին: Կենսագրականներին, համադրական վերլուծական բնոյթի յօդուածներին զուգահեռ տրուել են նաեւ նրանց բանաստեղծութիւններին հայերէն թարգմանութիւնները: Ժ.Թ. դարի 70-80-ական թ.թ. արեւմտահայ մամուլում տպագրուած կենսագրական յօդուածներում առաւելապէս ուշադրութիւն էր դարձնում բանաստեղծներին ցարական իշխանութիւններին հետ ունեցած փոխյարաբերութիւններին, ստեղծագործութիւններին ընդհանուր բնութագրմանը: Հիմնականում հետապնդելով ճանաչողական նպատակ՝ դրանք աչքի չէին ընկնում նիւթի բազմակողմանի իմացութեամբ եւ վերլուծութիւններին խորութեամբ⁵: Այսպէս, օրինակ, 1876թ. «Բազմավէպ» ամսագրի «Հանդէս կենսագրական» բաժնում տպագրուած Բ. Քուլշներեանի «Աղեքսանդր Բուշքին» ակնարկում չափազանց զուսպ եւ հակիրճ ներկայացւում է բանաստեղծը. «Անաչառ քննիչ կը դասեն Բուշքին Ռուսիոյ բանաստեղծներուն առաջին կարգը. ունի ծննդական միտք, աշխոյժ երեւակայու-

⁵ Օրինակ՝ միայն 1899 թուականին արեւմտահայ մամուլում տպագրուել են. «Արեւելք»՝ Ա.Ս. Պուլշկին, «Սեւ համբոյր», «Կովկասեան կեանք», «Հանդէս ամսօրեայ»՝ Պուլշկինի յորեւեանը հայրենիքում, «Պուլշկին-ուսու բանաստեղծ», «Անահիտ»՝ Բուշքին եւ Միքեւելիչ յօդուածները եւ այլն:

թիւն, ընտիր լեզու, վսեմ պարգուծեամբ խառնուած: Միով բանիւ, ռուսաց Անտոն Շեկյէ մ'է, ըստ ամենայնի յաջողած»⁶:

Արեւմտահայ պարբերականներում տպագրուած գրականագիտական, վերլուծական բնոյթի մի շարք յօդուածներում փորձ է արւում գուգահեռաբար ներկայացնել Պուշկինին եւ Լերմոնտովին՝ համեմատել նրանց բանաստեղծական սկզբունքները, թեմատիկ նմանութիւններն ու տարբերութիւնները, գաղափարական առանձնայատկութիւնները: Ինչպէս նշում է ակադ. Էդ. Զրբաշեան իր «Պուշկինը եւ հայ բանաստեղծները» գրքում՝ «Պուշկինի ռէալիզմը իր բազմակողմանիութեամբ, քնականութեամբ, նրա հաւասարակշռուած արուեստը կեանքի քեկումնային փուլերում, քնականաբար, կարող էին աւելի քիչ գրաւել երիտասարդ սերնդին, քան Լերմոնտովի պոեզիայի ռոմանտիկ պոռթկումութիւնն ու վառ գոյները: Սխալ չի լինի, եթէ ասեմք, որ Պուշկինի ստեղծագործութեան հմայքն ու մեծութիւնն ամբողջութեան մէջ հասկանալի ու գնահատելի աւելի դժուար է, քան Լերմոնտովինը: Դրա համար աւելի մեծ կեցասպիրա, արուեստի խորքային ըմբռնում է հարկաւոր»⁷: Այս նոյն խնդրին է անդրադարձել նաեւ 1905 թուականին «Բազմավէպում» տպագրուած «Պուշկին եւ Լերմոնտով» յօդուածի հեղինակը (ստորագրուած է՝ Հ. Ս. Երեմ): Գրախօսելով Ա. Ծատուրեանի «Ռուս բանաստեղծներ» գիրքը (Մոսկուա, 1905)՝ յօդուածագիրը ծանօթացնում է արեւմտահայ ընթերցողին Պուշկինի եւ Լերմոնտովի «մեղեդիներու հոգեբանութեանը»: «Լերմոնտով ու Պուշկին, - գրում է նա, - իրարմէ անբաժան, դիւրիչ քնարներ են. իրենց մօթաները կը հասկնայ ամէնէն յետին անուս գեղջուկը. սրտացաւ, անպաճոյն, անկաշկանդ պարգուծիւմ մը ունին եւ այդ պարգուծեան մէջ է իրենց դասական համբաւը...»:

Վերլուծելով Պուշկինի եւ Լերմոնտովի յատկապէս խոհական-փիլիսոփայական բանաստեղծութիւնները՝ հեղինակը ցոյց է տալիս այն ներքին տազնապները, որոնք փոթորկում էին երկու բանաստեղծներին, կեանքի, աշխարհի ու բնութեան յաւերժու-

⁶ ՔՈՒՇՆԵՐԵԱՆ Ք., Ալեքսանդր Բուշին, «Բազմավէպ», 1876, N 1-12, էջ 248-250:

⁷ ԶՐԲԱՇԵԱՆ ԷԴ., Պուշկինը եւ հայ բանաստեղծները, Ե., 1999:

Թեան մասին նրանց ինքնատիպ պատկերացումները: Ռուս բանաստեղծների նման հեղինակը հարցնում է. «... բայց կա՞յ իրական ազատութիւն. ազատ չէ արծիւը, շանթ ու փոթորիկ գիւմբը կը հալածեն, ազատ չեն բռնակալները. կասկած, երկիւղ ու խիղճ գիրենմ կալանաւորած են: Եւ ո՞վ է ազատ. Թոլստոյին մշակները... Թե՞ Կօրգիի թափառաշրջիկ չարճաշութեան գաւակները...»:

Յօդուածագիրը անդրադառնում է նաեւ Լերմոնտովի պոեզիայի հայրենասիրական մոտիւններին՝ նշելով, որ իսկապէս դա սրբազան զգացում է, յատուկ բոլոր ազգերի բանաստեղծներին. «Հայրենի՛ք... ինչ մոգիչ բառ, որ յաւիտեական լարով սիրտը ծննդավայրին հետ կը կապէ. մեր ո՞ր բերթողը, ո՞ր վիպասանը հայրենիքի սիրով չէ գիւնովցած, ո՞ր բնարը իր հայրենատրոփ շնչով չէ յուզած երգի լարերը. մեր ամենէն անկեղծ հայրենասէր վիպասանը՝ Արմէանը կը հառաչէ.

Ա՛խ վաթան, վաթան՝ բո հողին դուրբան,
Գո ծխին դուրբան, բո ջրին դուրբան...»:

Թափանցելով բանաստեղծի հոգու ներթաքուն անկիւնները, հասկանալով նրան յուզող զգացմունքների խորութիւնն ու տառապանքը, վայրէջքներն ու հոգու թռիչքները, բանաստեղծական ապրումի անկեղծութիւնն ու մաքրութիւնը, նա գրում է. «Եւ յետ այնքան յուսահատ քաղամբներու եւ յուսախաբութեան, բանաստեղծ Լերմոնտովը կը մնայ բարեպաշտ հաւատացեալ ու կ'երգէ.

Կրկին հատոցի ես տուրք երկրային
Տուրք սիրոյ, յուսոյ, քարոյ, չարութեան
Եւ պատրաստ անձս տալ մի այլ կեանքին՝
Լուռ սպասում եմ քաղաւի ժամուն...

Ամսագրում յաճախ կարելի է հանդիպել համադրական բնոյթի յօդուածների, որոնք բացի ճանաչողական նշանակութիւնից ունեն նաեւ գրականագիտական արժէք: Երբեմն դրանք թարգմանում էին Ֆրանսերէն կամ ռուսերէն պարբերականներին, որոնց հեղինակները, բնականաբար, հայեր չէին: Այդպիսին է, օրինակ, «Բազմալէպում» տպագրուած «Լէոնիտ Անտրիէս եւ Մորիս Պարրէս» յօդուածը, որի հեղինակի՝ Գ. Սափիշի («La Re-

mo» մայիս, 1908) հետ կարծես բանավեճի է բռնում սոյն յոդ-
ուածի անանուն հեղինակը: «Լեռնիտ Անտրիել,- գրում է նա,-
Ռուսաստանին ամենէն մեծ գրագէտներէն մին կը համարուի.
Քէ իբր թատերգակ եւ թէ իբր վիպասան՝ ներկայացուցիչ մ'է
իր երկրի գրական ամենէն զօրաւոր ձգտումներուն. կ'ուզէ
ընկերական օգուտը փնտռել, արուեստը միջոց մ'ընել այդ գե-
րագոյն նպատակին»⁸: Անդրադառնալով Անդրէեւի «Ղազարոսի
յարութիւնը» ստեղծագործութեանը, հեղինակը փորձում է վեր-
լուծել Ղազարոսի կերպարը, անդրադառնում է ժողովրդի, անհա-
տի եւ պատմութեան մէջ նրա ունեցած դերի խնդիրներին: Նշե-
լով, որ Անդրէեւը հռչակաւոր եւ խորհրդապաշտ հեղինակ է, հե-
ղինակը անդրադառնում է նաեւ նրա ստեղծագործութիւնների
գեղարուեստական կողմին, յատկապէս նրա կերպարներին, որոնք
յաճախ անհատ անձնաւորութիւններ չեն, այլ պատկերներ,
խորհրդանշիչներ, գաղափարներ կրողներ՝ Մարդ, Մահ, Աստ-
ուած, Բախտ, Ճակատագիր եւ այլն՝ «եւ այդ էակը,- գրում է
նա,- ձեռքին մէջ քրագ մը բռնած է անընդհատ՝ որ մարդկա-
յին կեանքն իմքնին է եւ կը հալի որչափ թատրոնը յառաջ
կ'երթայ»:

Ռուս դասականներին նուիրուած «Բազմավէպի» յոդուած-
ներից առանձնատուր ուշադրութեան են արժանի նաեւ Ն.
Նեկրասովին, Ի. Տուրգենեւին, Մ. Գորկուն նուիրուած յոդուած-
ները, որոնք զրականագիտական լուրջ եւ բազմակողմանի ու-
սումնասիրութիւններ են, եւ նպատակ են ունեցել հնարաւորին
չափ լիարժէքօրէն ծանօթացնել ընթերցողներին նրանց հետ:

Ք. Քուչներեանի «Նեքրասով ազգային բանաստեղծն ռու-
սաց» յոդուածում, որին կից ներկայացւում են նաեւ Նեկրասովի
առանձին բանաստեղծութիւններից զրաբար թարգմանութիւն-
ներ, կենսագրական նիւթից բացի, հեղինակն անդրադառնում է
բանաստեղծ-ժողովուրդ փոխյարաբերութեան խնդրին, բանաս-
տեղծութիւնների գաղափարական բովանդակութեանը, լեզուին
եւ ոճին՝: «Յարմարագոյն միջոց էր փարտար հեղինակի մը
համար՝ սուր գրիչը ուղղել դէպի յապօրէն եւ յանխղճ վա-

⁸ «Բազմավէպ», 1908, թիւ 2., Յունիս, էջ 281-283:

⁹ Մանրամասն տե՛ս ՔՈՒՇՆԵՐԵԱՆ Ք., Նեքրասով ազգային բանաստեղծ ռու-
սաց, «Բազմավէպ», 1878, հատ. 1.2, էջ 169-173:

րիչս եւ առ կեղեքիչս ժողովրդեան. չփախուց Նեքրասով այս միջոցը, բոլորովին նուիրեց իր համնարը եւ գրիչը ժողովրդեան նկուն եւ հարստահարեալ մասին, պաշտպանելով զնոսա եւ ողբալով եւ յանդիմանելով զհարստահարիչս», - գրում է Քուչներեանը: Համեմատելով Դանթէի հետ նա նշում է. «Իրաւնա Տանդէի նման յերկինս չի վերանար եւ 'ի սանդարս չ'իջնէր, եւ մտացածին պատիժներ չի ստեղծեր՝ զանօրէնութիւնս խայտառակելու եւ պատժելու համար, այլ գեղերու, տնակներու մէջ կը բանայ նա դժոխքը»: Սակայն հեղինակը լաւատեսօրէն է նայում ապագային, Նեկրասովի թողած ժառանգութեանը եւ վստահ գրում. «...Բայց չ'ընկնիր Նեքրասով այդ ծանր մտատանջութեան ներքեւ, մէկ դի կը ձգէ այդ տխուր խորհուրդը, կը սկսի յորդորել, փաշալեքել իրեն հետեւողները, որ աշխատին սերմանել իւր քացած ակօսներուն մէջ»: Եւ ինչպէս «Բազմավէպ» ամսագրի շատ հեղինակներ Քուչներեանը եւս յոյս է յայտնում, որ ազգային մի լաւ թարգմանիչ՝ «Ճարտարագոյն գրիչ մը, քէ ոչ բոլոր՝ գոնէ ընտրանաւ թարգմանելով՝ մեր հայերէն վսեմ եւ նոխ լեզուով Նեքրասովի ոգելից տաղերը, կը հարստացնէ հայկական մատենագրութիւնը»: Քուչներեանական թարգմանութեամբ այսպէս են հնչում Նեկրասովեան տողերը.

Սերմանեցէք զսերմ բարի
Զյաւերժակայն, ըզմտացի.
Շնորհ մեծ, երկոցդ, ասասցէ
Ազգս Ռուսաց'ի սըրտէ

Ծանրակշիռ ուսումնասիրութիւն է նաեւ 1877 թուականին լոյս տեսած «Իւան Թուրկենեւ» յօդուածը, որի հեղինակն ի դէպ նշուած չէ, սակայն կարելի է ենթադրել, որ գուցէ այն եւս պատկանում է Ք. Քուչներեանի գրչին: ԅօդուածում բազմակողմանի վերլուծւում են դարասկզբի ռուս գրականութիւնը, գրական կապերն ու առնչութիւնները, տրւում են գնահատականներ ռուս բանաստեղծներին՝ Պուշկին, Լերմոնտով, հեղինակն աղբադառնում է Գրիբոյեդովին, Գոգոլին, «որի շնորհիւ ռուս մատենագրութիւնն յերկիր իջաւ, հաստատութիւն առաւ, մարդավօտի եղաւ»: Նշում է նաեւ «նատուրալ դպրոցի» մասին եւ այն մեծ համբաւի, որ ձեռք բերեց Տուրգենեւն իր ստեղծագործութիւններով Եւրոպայում:

Խօսելով Տուրգենևի արեւմտեան կողմնորոշման մասին, ընդգծելով, որ նա բացարձակապէս նոր եւ թարմ խօսք էր բերում ռուս մատենագրութեան մէջ՝ յօդուածագիրը փորձում է տալ գրողի ստեղծագործութիւնների ընդհանուր բնութագիրը, ելնելով գաղափարական եւ փիլիսոփայական ուղղութիւնից, հասարակութեան սոցիալական խնդիրների լայն ու համապարփակ պատկերումից. «Ըսուեցաւ, թէ Թուրկենեւ մասնաւորապէս քարոյազէտ էր գրականութեան մէջ, այսինքն թէ իրական կերպարանաց նկարագրութեան վրայ միայն կը կենդրոնացուներ իր ուսումը. մէկ խօսքով՝ տարեգրող եւ լուսանկարիչ էր ընկերական երեւութից»,- գրում է հեղինակը:

Յատկանշական է նաեւ այն հանգամանքը, որ յօդուածուսումնասիրութեան մէջ հեղինակը ստեղծում է նաեւ գրողի, մտաւորականի եւ արուեստագէտի հրաշալի դիմանկարը՝ յենուելով Տուրգենևի յիշատակարանի, գրառումների, ուղեգրութիւնների, ինչպէս նաեւ գրողի ժամանակակիցների՝ յատկապէս Բելինսկու կարծիքների վրայ: Իրօք այսօր էլ Տուրգենևի «վիպասանութեանց ընթերցումը կը սովորեցնէ ոչ միայն լաւ ֆանցնալ գգրագէտն եւ գրանաստեղծը, այլեւ ազատական եւ ազնւական գգացումն ունեցող անձն»¹⁰:

Ռուս դասականներին նուիրուած յօդուածներն ու թարգմանութիւնները լոյս էին տեսնում «Բազմալէպի» տարբեր բաժիններում, սակայն ամէնից աւելի յաճախ դրանք տեղ էին գտնում «Հանդէս բանասիրական», «Բանասիրական տեղեկութիւն», «Հանրապատում»- (գրքեր, նորութիւններ, տեղեկութիւններ), բաժիններում՝ «Քերթողական ծաղկաքաղ», «Բանաստեղծանք», «Վիպականք», խորագրերի տակ եւ այլն: Բաւական է նշել, որ միայն «Բազմալէպի» 1902 թուականի համարում նիւթեր են տպագրուել Գորկու, Լերմոնտովի, Գաբուլի, Նիկիտինի, Ժուկովսկու մասին¹¹, որոնց մէջ կան ինչպէս ծանրակշիռ գրականադիտական յօդուածներ՝ օրինակ, Օսիպ Լուրիէի («Մաքսիմ Կորբի» յօդուածը, այնպէս էլ կենսագրական-յոբելեանական հաղորդումներ, ռուս բանաստեղծներից թարգմանութիւններ («Թարգմանութիւն ի քերթուածոց ռուս բանաստեղծի Նիկիտին»): Ի

¹⁰ «Բազմալէպ», 1877, էջ 137-143:

¹¹ «Բազմալէպ», 1902, N 5, էջ 245, N 7, էջ 315-318, էջ 471-473, էջ 461:

դէպ Լուրիէի յօդուածը լայն հնարաւորութիւն է տալիս ամսագրի ընթերցողներին ծանօթանալու Գորկու կենսագրութեանը, գրական հետաքրքրութիւններին, գրականութեան թեմատիկային, հասարակական, քաղաքական եւ սոցիալական այն տիպական երեւոյթներին, որոնք հիմնականում արտացոլուել են նրա ստեղծագործութիւններում, որոնց կենտրոնում մարդն է իր ուրախութիւններով, դառնութիւններով, տառապանքով եւ գալիքի հաւատով: Իսկապէս իրաւացի է յօդուածի հեղինակը, երբ գրում է, թէ «Ռուսաստանի մէջ միշտ մատենագրութիւնը եղած է գրիւնը շարժիչ ուժը մտաւորական եւ ընկերական զարգացման»:

Խօսելով «Բազմավէպում» տպագրուած ուսու դասականներին նուիրուած յօդուածների եւ թարգմանութիւնների մասին, չի կարելի չնշել նաեւ Լեւ Տոլստոյի անունը, քանզի մեծ էր նրա ճանաչումը համաշխարհային մշակոյթում արդէն իսկ իր կենդանութեան օրօք: Յատկանշական է, որ հայերը նախ ծանօթացել են Լեւ Տոլստոյի կրօնաբարոյագիտական, փիլիսոփայական բնոյթի ստեղծագործութիւններին, յետո՛յ՝ գեղարուեստական: Դա, հաւանաբար, պայմանաւորուած էր համամարդկային այն խնդիրներով եւ գաղափարներով, որոնց մասին գրում ու հազանգում էր մեր մոլորակի մեծ քաղաքացին ու հումանիստը: Ինչպէս ցոյց է տալիս արեւելահայ եւ արեւմտահայ պարբերական մամուլի ուսումնասիրութիւնը, Լեւ Տոլստոյի կրօնաբարոյագիտական, բարոյափիլիսոփայական յօդուածներն ու ստեղծագործութիւնները հոգեկու ալիք բարձրացրեցին հայ հասարակական կեանքում¹²: Մեծ գրողը խօսում էր հաւատի մասին՝ միայն բացարձակապէս տարբեր այն կեղծ ու շինծու, մարդկային արժանապատուութիւնը վիրաւորող ու ստրկացնող հաւատից: Նարեկացու նման նա էլ գրում էր Աստծու եւ աստուածային սիրոյ, երկրի վրայ մարդու ունեցած դերի, կեանքի յաւիտեականութեան եւ հոգու անմահութեան մասին: Նա աշխարհի առջեւ բացում էր տառապեալ հոգին («Խոստովանութիւն»), խոստովանում իր տագնապները, փնտրում ճշմարտութիւն, հաստատում հաւատի իր սահմանները («Ինչում է իմ հաւատը»):

¹² Տե՛ս ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ Ռ., Հայ պարբերական մամուլը Լ. Տոլստոյի կրօնաբարոյագիտական հայեացքների մասին (1880-1920), Փրիստոնէսքիւնը եւ Հայաստանը, Երեւանի համալսարանի հրատարակչութիւն, 2001, էջ 58-76:

Լ. Տոլստոյի համաշխարհային ճանաչմանը զուգահեռ հայ պարբերականներում յաճախ կարելի էր հանդիպել նրա ստեղծագործութիւնների թարգմանութիւնների, որոնք սովորաբար ուղեկցւում էին թարգմանիչների կողմից տրուող բացատրութիւններով ու մեկնաբանութիւններով, դրանց յաջորդող գրախօսութիւններով ու վերլուծական յօդուածներով¹³։ Այս ամէնից, բնականաբար, անմասն չէր մնում նաեւ «Բազմավէպը», որն, ինչ խօսք, իր ընդգրկումներով, խորութեամբ եւ հայ մշակոյթի զարգացման ու տարածման դերով անկիւնաքարային տեղ է զբաղեցնում հայ պարբերականների պատմութեան մէջ։ Այսպէս օրինակ իր ընթերցողներին ծանօթացնելու համար Լեւ Տոլստոյի կրօնական, բարոյագիտական հայեացքներին, ինչպէս նաեւ կեանքին «Բազմավէպում» տպագրւում են 1895թ.՝ «Ի տօնի ամենասուրբ երրորդութեան»¹⁴, 1905թ.՝ «Մէր»¹⁵, 1908թ.՝ «Կեանքի մասին»¹⁶ ստեղծագործութիւնները։ Լեւ Տոլստոյի կենսափոխակերպական հայեացքների քննութեանն է նուիրուած Ս. Երեմեանի «Մենք մեր յոյսը» յօդուածը¹⁷։

Լեւ Տոլստոյի «Կեանքի մասին» ստեղծագործութեան հայերէն տպագրութեան առիթով խմբագրութիւնը նշում է, որ գրողի 81-ամեակը պէտք է շնորհալից տօնուէր ամբողջ աշխարհում, եթէ «ոռւս մեծ գրագէտը արգիլած չլիար»։ Ներկայացնելով ընթերցողին այս գործը՝ խմբագրութիւնը յոյս ունի, որ այն հնարաւորութիւն կը տայ ընթերցողներին «ծանօթանալու հեղինակի թէ՛ գաղափարներուն եւ թէ՛ ոգին»։ Միաժամանակ որոշ բացատրութիւններ է տալիս նաեւ թարգմանիչ Վահան Ազատեա-

¹³ Բաւական է նշել, որ 1880-ական թուականներից մինչեւ 1920 թ. հայ պարբերականներում Լ. Տոլստոյի եւ նրա ստեղծագործութիւնների մասին տպագրւել են աւելի քան 290 յօդուածներ, գրախօսութիւններ, հաղորդումներ, ակնարկներ, կարծիքներ եւ այլն, որոնցից գրեթէ 60-ը վերաբերում են նրա կրօնաբարոյագիտական, գաղափարական, փիլիսոփայական հայեացքներին, նրա վարդապետութեանը։ Տե՛ս Լեւ Տոլստոյը հայերէն թարգմանութիւններում, Երեւան, 1974։

¹⁴ Տե՛ս «Բազմավէպ», 1895, էջ 268-269 (հատուածներ)։

¹⁵ «Բազմավէպ», 1905, էջ 292-300։

¹⁶ «Բազմավէպ», 1908, N 3, էջ 2-7։

¹⁷ «Բազմավէպ», 1903, N 11, էջ 473-477։

նր: Նշելով, որ Տոլստոյի այս անտիպ ստեղծագործութիւնը առաջին անգամ անգլերէն է հրատարակուել, նա գրում է, որ ռուսերէն լոյս տեսնելուց յետոյ, այն հէնց բնագրից թարգմանուել է հայերէն:

«Բազմալէպում» տպագրուած ռուս դասականների բանաստեղծութիւնների եւ որոշ արձակ ստեղծագործութիւնների թարգմանութիւններն ունեն իրենց ուրոյն պատմութիւնը եւ կարեւոր դեր են կատարել նրանց ճանաչման ու հայացման ճանապարհին: Բ. Քուշներեան, Հ. Պալեան, Ա. Բեկ-Յովսէփեան, Վ. Ազատեան, Կ. Ղազարբեկեան, Ա. Նալբանդեան եւ ուրիշներ, ովքեր ոչ միայն զբաղւում էին գրական, հասարակական լայն գործունէութեամբ, այլեւ իրենք ստեղծագործում էին, գրում բանաստեղծութիւններ, նաեւ թարգմանում այն, ինչը, բնականաբար, մօտ էր, համահունչ իրենց զգացմունքներին, մտածողութեանը, գրական ճաշակին եւ քիչ թէ շատ գաղափար կարող էր տալ տուեալ հեղինակի մասին: Այս յօդուածի շրջանակների մէջ չենք մտցնում «Բազմալէպում» տպագրուած ռուսերէնից կատարուած թարգմանութիւնների խորը, բազմակողմանի վերլուծութիւնը, որն, անշուշտ, մէկ այլ ուսումնասիրութեան նիւթ է: Սակայն թարգմանական որոշ սկզբունքների մասին, որոնք բնորոշ են եղել գրեթէ բոլոր թարգմանիչներին, թերեւս, անհրաժեշտ է նշել¹⁸:

Հետաքրքրական է, օրինակ, այն փաստը, որ թարգմանիչները շատ յաճախ վերնագրեր են դրել այն բանաստեղծութիւններին, որոնք բնագրում անվերնագիր են: Ի հարկէ, դրանք համապատասխանում են բանաստեղծութեան ընդհանուր տրամադրութեանը, գաղափարական-իմաստային բովանդակութեանը: Օրինակ՝ Ա. Ս. Պուշկինի «Брожу ли я вдоль улиц шумных...» հանրայտ բանաստեղծութիւնը Քուշներեանը վերնագրել է «Յիշատակ մահու», Յովհ. Պալեանը՝ «Խորհեր»: Կամ՝ «Отцы пустынных и жены непорочны» տողերով սկսուող հրաշալի ոտանաւորը հայերէն վերնագրուած է «Աղօթք» (թարգմ. Հ. Պալեան),

¹⁸ Թարգմանական հարցերի մասին մանրամասն տե՛ս ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ Ռ., «Մեղեդիներն լեցնէին սրտեր հմայիւք սրբազան», Ա. Ս. Պուշկին. «Սեանքի սայլակը» գրքի առաջաբանը (ներկայացւում են Ա. Ս. Պուշկինի բանաստեղծութիւնների արեւմտահայերէն թարգմանութիւնները), Ե., 1999, էջ 5-14:

"Ночной зефир" բանաստեղծութիւնը՝ «Սպանիական մրմունջ» (Թարգմ. Հ. Պալեան), "Птичка божия не знает" «Թռչնիկ» (Թարգմ. Ք. Քուչներեան, Հ. Պալեան) եւ այլն: Ուշադրութեան արժանի են նաեւ միեւնոյն բանաստեղծութեան տարբեր թարգմանութիւնները, որոնք հնարաւորութիւն են տալիս համադրելու, ծանօթանալու բնագրի վերստեղծման գեղարուեստական առանձնայատկութիւններին, խօսքի պատկերաւորման միջոցների օգտագործմանը: Օրինակ, այդպիսի համադրութիւն կարելի է անցկացնել Հ. Պալեանի եւ Ք. Քուչներեանի թարգմանութիւնների միջեւ: Ա. Ս. Պուշկինի "Брожу ли я вдоль улиц шумных..." բանաստեղծութեան երկու թարգմանութիւնները.

Ք. Քուչներեան

Յորժամ շըրջիմ ի փողոցի բազմաժխոր,
Կամ ի տաճար ինչ ելանեմ մարդաշատ,
Ի հանդանակ պատանեկաց խելացնոր
Խորհուրդ մըտացս ինձ ածեն անընդհատ:

Հ. Պալեան

Թէ փողոցներով շրջիմ աղմկալից
Եւ թէ կը մտնեմ բազմամարդ տաճար,
Կամ խօլ պատանեաց ըլլամ խօսակից,
Տամ երազներու գանձըս՝ հաւասար:

Բնագրի եւ թարգմանութիւնների համեմատութիւնը ցոյց է տալիս, որ բնագրին՝ բովանդակային առումով, աւելի մօտ է Հ. Պալեանի թարգմանութիւնը:

Թարգմանիչները յաճախ դիմել են նաեւ ազատ թարգմանութեան սկզբունքին, որն, անշուշտ, ընդհանուր գաղափար տալիս է ստեղծագործութեան մասին, սակայն բնագրային եւ բովանդակային շատ նրբերանգներ կորչում են: Այդ թարգմանութիւնների մէջ յատկապէս առանձնանում են Հ. Պալեանի թարգմանութիւնները, որոնք բացի «Բազմավէպից» 1899-1905թթ. տըպագրւում էին նաեւ «Արեւելեան մամուլում»: Թարգմանութիւններ, որոնք աչքի են ընկնում նախ եւ առաջ ռուսերէնի լաւ ի-

մացուլթեամբ, բանաստեղծական մտքի վերստեղծման հրաշալի ունակուլթեամբ, բանաստեղծական խօսքն զգալու, տաղաչափական, հնչեղանգային, իմաստային առանձնայատկուլթիւնները պահպանելու կարողուլթեամբ: Բաւական է նշել, որ 1903, 1904, 1905 թուականներին ընթացքում Հ. Պալեանի թարգմանուլթեամբ տպագրուում են ռուսական պոեզիայի այնպիսի հրաշալի գոհարներ, ինչպիսիք են Պուշկինի՝ «Կալանաւոր», «Հիւսիսակ», «Աղօթք», «Ամբոխ», «Զի», «Մուսա», «Ամպ», Լերմոնտովի՝ «Ոստ Պաղեստինու», «Երեք արմաւենի», «Երբ որ արտը ոսկեգոյն նման ալեաց կը ծփայ», «Բանաստեղծ», «Շահատակին շիրիմը», «Օղաչու նաւը», «Հրեշտակ», «Փափագ», «Մարգարէ», Նիկիտինի՝ «Փլատակք», Ա. Տոլստոյի «Մեղաւորուհին», «Անդնդին մօտ ուր խոնարհին ուռենիք», Մայկովի՝ «Ծիծեռնակք», «Լեռնավտակք», բանաստեղծուլթիւնները, Զեխովի «Գրաւ մը», «Յովհաննէսը», «Երեխայք» պատմուածքները եւ այլն:

150 տարուց աւելի է, ինչ տպագրուում է «Բազմալէպ» ամսագիրը՝ պահպանելով ոչ միայն իր գիտական, այլեւ գրական-մշակուլթային բարձր մակարդակը, չխզելով իր կապը ընթերցողների հետ, արտացոլելով իր էջերում համագգային նշանակուլթիւն ունեցող երեւոյթները, համահունչ քայլելով ժամանակի հետ: Ուսումնասիրուլթիւնը ցոյց տուեց, որ համաշխարհային գրականութեան ճանաչման ու տարածման գործում իրենց ուրոյն տեղն ունեն այն յօդուածները, ուսումնասիրուլթիւններն ու թարգմանուլթիւնները, որոնք վերաբերում են ռուս գասական գրակաւնութեանն ու հայ-ռուսական գրական առնչուլթիւններին: Դրանք ոչ միայն պատահական բնոյթ չեն կրել, այլեւ նպաստել են հայ գրականութեան հարստացմանը, գրական լուրջ ու տեւական կապերի ստեղծմանը:

ՌՈՒԶԱՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Russian Classics in Bazmavep (1843-1920)

(summary)

ROUSAN TER-GRIGORYAN

The author presents a comprehensive study in all those articles, literary studies and translations, which deal with Russian Classical Literature and Armenian-Russian literary links. The study illustrates the history of the subject, as well as presents a comparative and synthetic analysis. The author attempts not only to systematize the informative, biographical, literary, analytical and comparative-synthetic pieces dedicated to Russian classical literature and Russian famous writers but also illustrates their actuality and correlation with contemporary issues. The articles and translations on Russian classical literature published in Bazmavep have opened a new page in the history of the study of Armenian-Russian literary links.